

ԱՐԵՎՈՅՍ ԱՐԱՏԵԱՆ

Հատը 3 մեծալիք Իզմիրի մէջ		ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՉԱՐԹԻ ԵՒ ՁԱՐԱԹ ՕՐԵՐԸ		Դուրսերը 4 մեծալիք Հատը	
Յ. Գ. ՄԱՍԿԵՐԵԱՆ		Տ Ա Ր Ե Գ Ի Ն Կ Ա Ն Խ Ի Կ		Ծ Ա Ն Ո Ւ Յ Ա Գ Ի Ն	
Համարատու—Տնօրէն		ԻԶՄԻՐ Օսմ. ոսկի 1		5 զրուշ տղը ՄԷԿ ԱՆԳԱՍՏ	
		ԴՈՒՐԱՐ Մէճիալի 6		2 զրուշ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍՏ	
		ՕՏԱՐ ԵՐԿԻՐ Ֆրանք 25		60 փարա ԵՐԵԿ ԱՆԳԱՍՏ	
				Չ. Գ. ՊԱՆՔԱՐԱՆԵԱՆ	
				Հիմնադիր	

Խ. ԴԵՐԶԱԿԵԱՆ, Կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վե.
Բաժանորդ բոլոր գործերը : Բուկիյէ—Պէտէսմէն

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ԽՐԱՆԳՐՈՒԹԵԱՆ
կը վերաբերի, խմբագրին կը դրկուի : Սէվիլ իսան, Թիւ 17

ԻԶՄԻՐ

Շաբաթ, 3/15 Սեպտեմբեր

Ծանօթ է տեղւոյ հասարակութեան, որ Իզմիրի ծովափորը չին, Արշիպէի եղերը քանի մը փոքրիկ քաղաքայի եւ նաւահանգիստի մէջ նաւարկութեան մեծ նախորդ տրուած է եւ հետեւ է ֆէնտի : Այս մեծաշնորհին կայաներու հրովարտակն արդէն հասած ըլլալով յիշեալ տրուած տէրն ամառս 1ին սկսեց նաւարկութեան, որոշեալ գծին վրայ, որ ոչ նուազ վէճի եւ դժգոհութեան տեղի տուաւ թէ՛ միւս միջոց բնկերութեան եւ թէ՛ ժողովրդեան մէջ մասին, մինչև որ կառավարութիւնը միջամտեց, միւս բնկերութեան չորհրդաւն մուտքը ժողովրդեան արգելելով : Տակաւին յայտնի չէ թէ ո՞ր պիտի յանգի այս գործին վաւերացնել, սա միայն կարող ենք ըսել թէ օսմանեան եւ անգլիական կառավարութեան մէջ վիճելի խնդրոյ մը կերպարանն ըստանալ կըստանայ, վասն զի միւս բնկերութեան նաւատէրն ու հետեւաբար տրուածաւն անգլիացի է : Եթէ հարկ է իրաւամբ խօսիլ, այդպիսի վէճ մը չլինար օրինաւորութիւն ունենալ ըստ մեզ : Անգլիոյ կառավարութեան մեր վրայ մինչև որ աստիճան ազդեցութիւն ունենալը բացառութեան կարօտ չէ, բայց գիտելի կէտն այն է միայն թէ, պարտուց եւ իրաւանց սկզբունքն ամեն տեղի ծանօտ եւ յարգող տէրութիւն մը՝ ինչ քաղաքականութիւն պիտի բռնէ այս խնդրոյ մէջ, պիտի կրնանք արդեօք ենթադրել, որ օտար տէրութեան մը հողին մէջ բնակող հարկաւորները տրամադրող քաղաքականութիւն մը բռնելու զիջանի որ եւ զօրաւոր տէրութիւն մը :

Ստոյգ է որ ծովը միջազգային գոյք կամ վայելուած մ'է, բայց այն ատեն միայն այդպէս է, երբ դուրս է միջազգային օրինաց կամ սովորութեանց գծած սահմանէն : Յամարէն ծովուն վրայ մինչև ուսմի հասած տեղը՝ նոյն ցամաքի տիրող տէրութեան կը վերաբերի, այսպէս կը տրամադրէ միջազգային իրաւունքը : Արդ, այս սկզբունքն ընդ ընդ չի կրնար իրաւունքը չորհրդաւ նաւարկութեան երթիւնքը՝ ըսել մեր կառավարութեան իրաւասութեանը ներքին կրնայ ըլլալ :

Կարելի է ուրեմն կարծել թէ այս կամ այն տէրութիւնը՝ վաւերացնելով իրաւասութիւնն ազատութիւնն ազատութեանը, միջամտի՝ այդ կառավարութեան իր հողին մէջ բնակողներուն ու իրաւասութեանը : Մեր տէրութիւնը եթէ կողմէ իր իշխանութիւնն ու իրաւասութեանը՝ ամբողջ պահել, բացարձակ իրաւունքն է զիջուածքներ օտարին չափուց : Իրաւ է որ Անգլիա վաւերացնելով իրաւասութիւնը անտահանութեան կերպով ազատ կըմտնէ, եւ դուրսէ այդ սկզբունքն յետոյ օտարին տալ պահանջէ այդ ազատութեանը : Սակայն կըստանք, քաղաքականութեան կերպով միշտ յանկուտիչ գիտնալ մը կրնայ իր յատուկ շահուց երեսին վրայ : Սուէի ջրանցին, Մանչի ընդ ծովայի ուղիին եւ Տիբրիս գետի նաւարկութեան խնդիրները՝ բաւական են ցոյցնելու, որ աստուծոյ անտահանութեանը ստիճանեալ շահերու խնդիր մ'է : Իզմիրի ծովափորն ու Արշիպէի ծովան ընդ մեր եղերը նաւահանգիստները, ուր միջազգային բաժան չմտնելով, օսմանեան ցամաք համարուելով, իր անմիջական եւ անբաժանաբար իրաւունքն է ուղղման պէս անօրինել, հետեւաբար եւ ոչ մէկ իրաւագիտութիւն չկրնար միջամտել իրաւաւոր մասնաւոր դաշնագրութիւն մը՝ որոյ գոյութիւնն ունենալը չենք գիտէր :

Մեր նախագիծ թիւով իմացուցած էինք թէ, Պոստալի երկաթուղային ներքին միալով անցեալ օր հայ մը մեռած է նորադիւնը հիւանդանոց փոխադրուած էր : Բանի մը օրէ ի վեր շատեր գանդաւանքան մեղ թէ, հիւանդանոցը՝ նոյն ատեն չէ ուղեր ընդունելու գիտիլ, եւ թէ գիշեր ատեն ժամկոչները թաղելու համար ճանաչ հանէր են : Ձենք գիտէր թէ մեր եկեղեցական օրէնքը կընենք՝ թէ ոչ գիշերը մեռել թաղել, սա միայն իմացանք որ քանի մը հայ երիտասարդներ տեսնելով եւ կարծելով որ ապօրէն է գիշեր ատեն մեռել թաղել, ետ դարձունել կուտան գիտիլ գէտի հիւանդանոց որ կրկին չընդունի, եւ կըստիպուին եկեղեցի գիտիլ եւ յաջողի վերջապէս նոյն գիշերը եկեղեցւոյ պարտեղը վար գնել տալ գիտիլ : Ձենք գիտէր թէ հիւանդանոցան վարչութեան կանանք ինչ է այս մասին, եւ կամ թէ

գիշերը դուրսէն մեռել չընդունել կամ ընդունել տրամադրող կանան մը ունի կամ ոչ, սակայն վաւերացիլ է որ այս կերպ դաշնագրութեանը չծագէին իմացաւորներն : Տեղւոյ յոյն թերթերէն մէկը կը պատմէ թէ, երկու հայ Մէրսինի մէջ գողութիւն մ'ընելով, ի ֆիստ վաճառականի մը, Իզմիր փոխած են : Գողորդանքն են 150 մէճիալի դուրս մը, ոսկի ժամացոյց մը եւ քանի մը կտոր գոհարեղէնք : Մէրսինէն հեռագիր կը դարձուի տեղւոյ ոստիկանապետ փեմ. Եղեթի վաշայի, այս եղելութիւնն իմացունող : Ոստիկանութիւնն կը յաջողի դատել ձեռք ձեռք : Անցեալ օր Ռէֆորմէն առնելով, իմացուցած էինք թէ, Նարբէ-Բէօյի կողմէր չարագործաց զինեալ խումբ մը երեւան ելած էր : Յիշեալ թերթին իւր երեկուան թուով կըսէ թէ, այդ խումբը Նիֆի կողմէր գայած է անցեղայի գիտիլ մէջ աղբիւրէն : Հայը, Բեթթի Պաքալ 23 ոսկի փրկանք տալով ազատէր է արդէն իր աղբիւրը : Պօստալ թերթերը կը ծանուցանեն թէ, մեր քաղաքայի Պ. Միւս Համաթօրուլ, որ Բրօստոս յոյն թերթին իմացուցած պէտք էր ժամանակաւ, Միտիլիի նախագետ ատենի ընդհանուր դատախազի օգնական կարգուած է :

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԻ

Մանիթէօր Օրինալի Սեպտեմբեր 11 թիւ թերթին մէջ հետեւեալ կը կարդանք : Բերայի թերթի մը պատմաճին հակառակ, Հայոց Պատրիարք Ամեն. Ներսէս Սրբազան, շաբաթ օր Նորին կայսերական Վեհափառութիւն Սուլթանի ներկայացաւ : Նորին Սրբազանութիւնը ընկերացած էր, փեմ. Արքայապետ յի : Ունեղորութիւնը տեսցէր իւր քաղաքը ժամ : Երեկուան հայ թերթերուն բնածին նայելով, Ներսէս Սրբազան չէ յաջողած իր հրաժարութեան ընդունել տալ վեճ. Սուլթանի, հակառակ իր պնդմանց : Ըստ Մատիսի վեճ. Սուլթանը բռնէ Նորին Սրբազանութեան Պատրիարք հիւանդ էր, բայց ձեր հիւանդութիւնը աշխատութեան կարօտ է, չէր կրնար ձեր առողջութիւնը վերստին առանց աշխատութեան : Կըսէր

բեմ հայ աղբիւր իր հաւատարմութեան համար, եւ դժեւ զձեղ պատրիարքական աթոռին վրայ տեսնելով : Դիտեմոր, ձեր հիւանդութեան դուրս վաշտ ուրիշ շատ պատճառներ տուելով, հաւատարմութեան մէջ խումբ մը մարդիկ կան որ զձեղ կընդունին : Ներսէս Սրբազան պատասխանէր է — միշտ ըստ Մատիսի — թէ այդպիսի խումբ մը գոյութիւն չունի, եւ թէ իր հրաժարման դիմակ պատճառն էր իր հիւանդութիւնը : Յայտնաւորեալ Վեհափառութիւնը գիտէր է, թէ բնական կը գտնէ որ, Ներսէս Սրբազան իր Բրիտանիայ եկեղեցւոյ մը պէտ, չուղէր ոչ ոք մասնաւոր ընել, եւ թէ՛ սա կայն կառավարութիւնը իրեն ինչ կամ պարտաւորութիւնը պիտի կատարէ : Ունեղորութեան վերջ, Վեհապետն հրաւիրէր է Պատրիարքն որ վերջնականապէս ետ առնուի իր հրաժարականը եւ իր պաշտօնը վերսկսի : Այսօր Նորին Սրբազանութիւնը Բուս-Բաբուր Պատրիարքարանը կը վերադառնայ, Պէօյլուքտէրէ Սրբազամ փաշայի ապարանքը թողալով : Ուրեմն ստուգութիւն չունի այն յուրը, զոր Երբերտի Սեպտ. 10 թիւէն քաղած է մեր վերջին երկու Ներքին լրոյ մէջ դրած էինք :

Գ Օ Լ Ի Ր Ա

Սեպտեմբեր 11 ին Ալեքսանդրիոյ մէջ գոյեղային մեռնողներուն թիւն է 3 : Ուրիշ տեղերէ ըսել չկայ : Առողջ խորհրդոյ որոշմամբ, սեպտեմբեր 12 էն (անցեալ չորեքշաբթի) սկսեալ Կիպրոսէն հասնող նաւերու դարանթիւնն 3 օրի ստորածուած է, առանց նաւը պարպուելու : Այս որոշումը գործադրելի է Կիպրոսէն հասնող այն նաւուց համար որք Իզմիրի եւ Հոսթոսի գարանթիւնները չեն հանդիպած իրենց ճանրորութեան միջոցին : Տը. Վիթմալիս

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Բարիկ, 11 Սեպտ. Մատակաւարի գաղղ. բանակին նախագահ հրամանատար Սմիլա Բիէր մեռաւ : Բարիկ, 11 Սեպտ. Կը հաւատենք թէ, անգլիական

կան կառավարութիւնը, նախապէս իրանսոյի եւ Չինաստանի հետ համաձայնելով, իրաւասութիւնն ապրիլ օտանձնէ : Թոնքիսի սահմանադրոյ որոշման համար : Իմացիկա, 11 Սեպտ. Սեպտեմբեր 1 էն մինչև 10 Սուէի ջրանցին անցած են 74 նաւ : Տոմարայ առնուած գումար 1,530,000 ֆրանք : Ծանկայի 10 Սեպտ. Չինացիի մը պատահարական մահուան պատճառով, որ տեղացի Բորթուկայի մը կողմէ սպաննուած կարծեցին, Բանթոնի մէջ խռովութիւններ ծագեցան : Ամբողջ քանի մը տուններ եւ օտարաց վերաբերող դործարաններ այրեց : Օտարականք, նաւահանգիստ գտնուող նաւուց մէջ ապստամբեցան : Գահիրէ, 11 Սեպտ. Պ. Պարիսկ հասաւ : Պատրիարքական ատենի կողմանէ տրուած տարբ Սուլթան-Ֆադիմեթու մահու պատիժը, իջեցրէ՝ մահը իր թիւարտութեան պատճի վախարկեց : Լոնտոն, 11 Սեպտ. Այս առտուան լրագիրք խիստ վիճամբեր կընեն Պուլիարիոյ ներկայ տաղանային վրայ : Թայմը կըսէ թէ, Պէրլինի դաշնագրութիւնը նպատակ չունէր ամենեւեմ Պուլիարիան ուստական դաւառմը դարձունելու : Վերջին հետազոտը Բարիկ, 12 Սեպտ. Վիեննայէն Թան լրագրոյ զըրկուած հետազոտ մը կը հաստատէ, թէ Սայցալուրկի մէջ Պիւմարք իշխանի եւ Բաշմուքի կոմիսնոր տեսուցութիւնը՝ հետեւեալ ունեցած են տաս տարի եւ երեք կարել 1879 թ. զինակցութեան դաշնագրութիւնը : Այս հետազոտը կը հաստատէ նմանապէս, Ռուսիայի եւ Սերպիայի այդ զինակցութեան մէջ մանեղը : Վիեննա, 12 Սեպտ. Խրուակիստանի սահմանադրութեան վրայ խռովութիւնները կը շատան : Շատ գիւղեր բացէ ի բաց ապստամբած են : Շարժումը գլխաւորապէս կալուածատէրաց դէմ ուղղուած է : Նոր զօրքեր զրկուեցան : Սթէնք, 12 Սեպտ. Անգլիական նաւատորմը որ կը բաղկանայ Ալեքսանդրա, Ինֆլէքսիպ, Թէմէրէր, Մոնարք, Բարիսֆորթ, Սիւլիէրպ եւ Էնվիւնիպլ զրահաւորներէ, Հէլիքոս Ալիգոն հետն ունենալով, Գալէքիոյ նաւանգիստը կ'գտնուի :

ՃԱՎԱՅԻ ԱՂԵՏՔԸ

Զարգացելիս պարագայի
Հարկեր հաշար ան

Գրեթէ մարդկային երեւակա-
յութենէ դուրս բան մ'է Սոնտի
ներուցը կործանող այս զարհու-
րելի արկածը: Ամսթերտամ հաս-
նող լուրերը կըստուգեն դժբաղ-
դաբար, որ այդ երկրաշարժին
մէջ ութսուն հազարէն մինչեւ
ՀԱՐԻԻԻ ՀԱՅԱՐ անձինք կորսը-
ուած են: Անժեքի պարսպին մէջ
գտնուող Հոլանտացի զօրախում-
բը ամբողջովին աներեւոյթ եղած
է ծովին ալիքներուն մէջ, որով-
հետեւ պարսպը ծովամայն կը-
լինի այս ահաւելի կործանման ա-
տեն:

Սուամթրայի ծովին մէջ, որոյ
խորը կըգտնուէր Թէլըր Պէթոնկ
քաղաքը, բնդարձակ տարածու-
թեան մը վրայ հրաբխային ժայ-
ռերու ահագին կոյտ մը դիզ-
ուած է: Այդ քաղաքին եւ ճա-
վայի մէջ՝ հաղորդակցութիւնն
անկարելի եղած է:

Գրաքաթոս կողմի բոլորովին
անտեսանելի եղաւ, իր 10 հա-
զարամէթր երկայնութեամբ եւ 8
հազարամէթր լայնութեամբ: Ե-
րեք քաղաք կործանեցան, ճա-
վայի արեւմտեան կողմ՝ Պանթա-
մի ամբողջ նահանգը քար ու
քանդ դարձան, աղբիւրները ցա-
ւաւրեցան, լավաներուն հոսումն
անհնարին խտութեամբ ծածկած
է հողը, կենդանի մնացողները
զարհուրանօք խոյս տուած են:
Գրաքաթոս կողմին բնկրմովէն,
երեսուն մէթր բարձրութեամբ
ժայթքող հրանիւթն ամեն կողմ
կը տարածէր ամեն ինչ կործա-
նելով, թէ՛ Սուամթրայի եղերը
եւ թէ՛ ճաւա կղզիին վրայ: Եւ
Ջերինկէնի նահանգին մէջ ՏԱ-
ՍԸՆ ՀԱՅԱՐ անձինք կորսուած
են:

Սուամթրայի եղերը վրայ Թէ-
լըր Պէթոնկ քաղաքին կործան-
ման լուրը Պաթավիա բերաւ՝
ժայթքումի ատեն նոյն տեղ դըտ-
նուող չորգնաւ մը, որ նախ դէ-
պի Անժեք ուղղուած էր այս
լուրն հոն գաւթելու համար, սա-
կայն բոլորովին կործանուած դը-
տաւ զայն: Շոգեհաւին տախ-
տակամածը ծածկուած էր՝ յի-
սուն հարեւրամէթր թանձրու-
թեամբ հրաբխային փոշի խառով
նաւապետն հաւաստած է թէ,
նաւորդած միջոցին, ծովու ըն-
դարձակ անջրպետի մը մէջ եր-
կու երեք մէթր թանձրութեամբ
քարերու հանգիւյսած է որք ծո-
վուն մակերեւոյթը կը գտնուէին
հեղուցի անցքին վրայ կը դըտ-
նուէր գրեթէ՛ հրաբխային նորա-
կաղմ կղզեակներու խումբը: Գը-
րաքաթոս կղզին նեղուցին մէջ
կը գտնուէր, Սուամթրայի եւ ճա-
վայի համահաւասար հեռաւո-
րութեամբ: Այս կղզիին քով կը
գտնուէին ուրիշ նուազ կարեւո-
րութիւն ունեցող երկու կղզի-
ներ եւս, որք նմանապէս ընկը-
մեցան:

Նախ օգոստոսի 25 ին էր, որ
Գրաքաթոսի հրաբուխի ժայթ-
քումին առաջին նշաններն երե-
ւան եկան, եւ Սուամթրայի ու
Պաթավիայի մէջ լուսեցան ահե-
ղամուռնչ բնդգետնեայ հոլմ-
ջիւններ: Առաջին անգամ ոչ
զոք վաղուցին ատոնք, եւ սա-

կայն քիչ մը յետոյ փոշեղէն ա-
հեղատեսիլ անձրեւ մը՝ ամբողջ
հորիզոնը պաշարելով մթադնեց
եւ բոլոր գիշերուան տեսողու-
թեամբ՝ ահագին քարեր եւ բու-
յալաւ նիւթերու գէղեր լեց-
ուեցան այդ երկու քաղաքաց
մէջ:

Առաւօտուն Անժեք քաղաքի
հետ բոլոր հաղորդակցութիւնը
բնդհատած էին: Կամուրջներն
սպառնալու կործանած եւ ուղի-
ներն անանցանելի դարձած էին:
Նեղուցին ջուրերը որոտագին
կ'ետային եւ ջերմութիւնը 20 առ-
տիճանէն բարձրացած էր: Նե-
ղուցէն հինգ հարիւր մէթր հե-
ռաւորութիւն ունեցող Մատու-
րա կղզիէն նշմարուեցաւ, որ
ծովուն մէջ լեռնաձեւ եւ փոքր-
րացայտ ահագին ալիքներու կոյ-
տեր բարձրանալով՝ ամբողջ հո-
րիզոնը կը ծածկէին:

Օգոստոս 26 ին հոնչիւնք ըս-
կեան դամ քան զգամ սաստ-
կանալ, եւ ահա միջօրէին՝ հրա-
բուխներու ամենէ ահագինն Մա-
հաՄէրի՝ սկսեց ահագնատեսիլ
բոցեր արձակել, որոյ հետեւե-
ցան իսկոյն ապա Կունանկ Կուն-
թուր եւ ուրիշ բազմաթիւ փոք-
րիկ հրաբուխներ, նմանապէս բու-
ցերու ժխորներ ժայթքելով, այն-
պէս՝ որ ճաւա կղզիին քառա-
սուն եւ հինգ հրաբխոց երրորդ-
ման սկիզբ առած էր հրերը
պոռթկալ եւ սպառնալ ի կործա-
նումն ամբողջ երկրին:

Կունանկ—Կունթուր հրաբու-
խէն բարձրացած բոցերն ամբողջ
մթնոլորտը կը լուսավառէին, եւ
իր բերնէն կը ժայթքէին ծծում-
բային տիգիւրու եւ լավաներու
հեղեղներ: Մերթ ընդ մերթ կը
լուսէին զարհուրելի պայթումներ,
որոց մոխիրներու եւ հրաբխային
քարերու անձրեւներ յաջորդե-
լով՝ հորիզոնին մէջ կը պայթէին
եւ վար կը թափէին ամենուրեք
մահ, կոտորած եւ կործանում
սփռելով:

Ծովուն վրայ բնդնշմարուած
երեւոյթները զարմանալի էին:
Ամպերն այնքան բեռնաւորեալ
էին երկարալիսնութեամբ, որ
տանն եւ հինգ թաթառներ միւ-
նոյն րոպէին տեսնուեցան:

Մարդիկ եւ կանայք, աղչուեց
եւ մանկուք՝ սարսափահար եւ
մոլորաքայլ կը լուսէին, օդին
մէջ արհաւիրաց աղաղակներ բառ-
նալով: Բազմաթիւ զոհեր իրենց
բնակարանաց մէջ թաղուեցան,
քարերու եւ իրերու չեղձակու-
տից ներքեւ:

Կիրակի իրիկուն՝ ընդհարում
ներն ու ժայթքումները սաստ-
կացան, իսկ կէս գիշերին Գան-
թունկի լեռնաշղթային վրայ դիզ-
ուեցան լայնատարած բոցավառ-
ամպեր՝ որք արեւելեան եղեր-
քէն մինչեւ արեւմտեան եղերքը
ծածկեցին. ցորչալի ժայթքում-
ները կը շատնային՝ այս ամպերն
ալ կը տարածուէին:

Հրաբուխներու կողբէն լավա-
ներու հեղեղներ կը հոսէին, որք
հովիտները կը լնուին ամեն ինչ
քանդելով իրենց անցքին վրայ:
Առաւօտեան ժամն 2 ին, ամ-
պակոյտն երկուքի բաժնուելով
սկսաւ անգայտանալ, եւ ցերեկը
տեսնուեցաւ որ, հարաւային
կողմէ փոս—Գարուսինէն՝ մինչեւ
հիւսիսային արեւմտեան կողմը

Կէկէրի—Փատէրոնք, այսինքն
յիսուն քառակուսի մղոն տարա-
ծութեամբ ահագին գետին մը
աներեւոյթ եղած էր: Երկու մեծ
գիւղեր կործանած էին եւ տանց
ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԻ ՀԱՅԱՐ բնակիչ-
ներէն՝ եւ ոչ մէկ հոգի կըցած էր
պրծիլ մահուանէ:

Զարմանալի պատահարներէն
մին էր հրաբխային տանն եւ չորս
կղզիներու յանկարծական կաղ-
մակերպութիւնը: Այդ կղզիները
գոյացան, երեքշաբթի յետ կի-
սաւոր, Սոնտի նեղուցին մէջ,
Սէն-Նիքոլա հրաւանդանէն՝ դէ-
պի Հոկ հրաւանդան գտնուած
ուղիղ գծին վրայ, որ կը հակի
Սուամթրայի կողմը, գրեթէ Մէ-
րաքի եւ Միլին կղզիներու գրեց
մէջ, որք նախքին ժայ օրն ընկը-
մած էին: Պաթավիայ մուտքին
վրայ, եղերքին երկայնութեամբ
տարածուած, եւ Չինաստանցի-
ներէ բնակեալ բազմաթիւ տու-
ներ կային, որք ամբողջովին կոր-
ծանեցան եւ ՔՍԱՆ ՀԱՅԱՐ հո-
գի մեռան: Քաղաքին ստորնա-
կողմը գտնուող եւրոպացուց թա-
ղին մէջ իսկոյն ապա ջուրերն
սկսեցին դիզուել՝ կործանելով
ամեն ինչ եւ ջրամոյն բնելով ա-
ւելի քան Երկու ՀԱՐԻԻԻ ան-
ձինք:

Պանթամի նահանգն իսպառու-
պետ ծովամոյն եղաւ, ուր խեղ-
դամահ եղան ՀԱՅԱՐ ՀԻՆԻ ՀԱՐ-
ԻԻԻ հոգի: Սէրանկ կղզին ամ-
բողջովին ծովին տակ թաղուե-
ցաւ եւ ԲՆԱԿԻՉՆԻԻԵՆ եւ ոչ մէկ
անձ կըցաւ պրծիլ այս զարհու-
րելի պատուհասէն:

ԱՅԼ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Այս սարսափելի եւ անլուր աղե-
տից վերաբերող հետեւեալ պարագա-
ները վերագրեալները կըլրացունեն:

Օգոստոս 26 ին, երկուշաբթի
գիշեր Փաթանտեանի հրաբու-
խէն սկսաւ լավաներու հեղեղներ
եւ զարհուրելի բոցեր արձակել:
Սուամթրայի վրայ կը տեսնուէին
հրեղէն ճահագնատեսիլ սիւններ,
որք անհուն երկայնութեամբ դէ-
պի երկինք կը բարձրանային:
Հրաբուխին կողերն ուրիշ կը սը-
լանային այդ հրեղէն սիւները,
լեցուեցան լավայի հեղեղներով,
որք ի հեռուստ ամեն ուղղու-
թեամբ կը հոսէին: Անհամար մը-
ղոններու տարածութեամբ կ'ոտ-
կար քարեղէն անձրեւ մը, եւ
միջոլորտն ալ պայտի փոշեղէն
ժխորով լեցուած էր՝ ուր խա-
ւարն աննկարագրելի կերպով սա-
ւառնած էր:

Աւերմանց այս ահեղատեսիլ
տեսարանին աւելցաւ ահեղամը-
ռունչ փոթորիկ մը, որ տունները
կը քայքայէր, ծառերն արմա-
տախիլ կընէր, եւ գետնափիւռ
կընէր մարդերն ու կենդանիս:

Եւ ահա յանկարծ տեսարանը
կը փոխուէր. լեռք կ'ընկղմի, եւ
Փաթանտեանի բարձրացած կե-
տին վրայ կը տեսնուին եօթը ցը-
ցուած բլուրներ, որք իրենց գա-
գաթէն անթափանց չողիւներու
եւ սպիտակ լավաներու ժխորներ
կը ժայթքէին, եւ յամբարաբ բը-
լուրներն ու լեռնակողերը պաշա-
րելով՝ հրաբուխը գիշերումներ կը-
կաղմէին ահագին տարածու-
թեան մը վրայ:

Որպէս տեսնեք ի վերեւ, քը-
սան հազար Չինաստանցի եւ եր-
կու հարիւր եւրոպացի կորսը-
ուած էին ստորին քաղաքին մէջ:
Այս հոյակապ քաղաքի եւրոպաց-
ուց թաղին հետքը բոլորովին
աննշմարելի դարձած է: Պան-
թամ քաղաքն ամբողջովին ջու-
րերու տակ թաղուած է, ուր
խղղուած են ՀԱՅԱՐ ՀԻՆԻ ՀԱՐ-
ԻԻԻ հոգի: Սէրանկ կղզիին մէջ
եւ ոչ մէկ հոգի կարողացաւ ա-
զատիլ: Շէրիպոնի մէջ ջրհեղե-
ղը թէպէտեւ մեծ կորուստներ
չըրաւ, սակայն ժայռերն ու լա-
վաները ահագին կոտորածներ
ըրին: Պրեթինդոնի, Սարամանդ,
Եոկուկէրտա, Սուրակէրտա եւ
Սուրաբաւա շատ տառապեցան:
Սուրաբաւա 300 մղոն հեռաւո-
րութիւն ունի Սոնտի նեղուցէն՝
որ կեղերն է այս անպատում
աղէտից: Թումէրանդ ծածկուե-
ցաւ լավաներու տակ, եւ բնակ-
չաց ՀԱՅԱՐ ՈՒԹ ՀԱՐԻԻԻԻԻԻ կոր-
սուեցան: Ֆիկէլէկինք բոլորովին
կործանեցաւ: Վարանիէի եւ Թո-
լաթսայի մէջ կորուստն անթուե-
լի է: Թէլըր-Պէթոնկ, Անժեք եւ
Ջերինկէն քաղաքներն ոչ այլ
ինչ են՝ եթէ ոչ աւերակաց կոյ-
տեր: Անժեք խիստ գեղեցիկ եւ
դարաւարեղ բոյսերու մէջ շը-
ղապատեալ փոքրիկ նաւահան-
գետն մ'է:

Ջրադրական տեսակետով, նա-
ւորներուն երկիւղ աղբոյ պա-
րագան է՝ նեղուցին նաւաղա-
կան գծին իսպառնալու խան-
գարումը: Հետեւեալ նկարադ-
րէն կրնայ հասկնուիլ այս —

Սոնտի նեղուցը եօթնասուն
մղոն երկայնութիւն ունի (մէկ
մղոնը 1852 մէթր է): Հարա-
ւային արեւելեան մուտքն՝ Հընդ-
կաստանի Ուկիանոսին կողմէն
վաթսուն մղոն լայնութիւն ունի,
սակայն Չինաստանի ծովին կող-
մէն նեղուցը շատ կ'անձկանայ,
այսինքն այդ կողմի լայնութիւնն
է տասներեք մղոն, գրեթէ քը-
սան հազարամէթր: Եղերց հա-
մահաւասար հեռաւորութեամբ,
գրեթէ մէջ տեղը կը կենային
երեք կղզիներ, որոնց ամենէ
մեծը՝ Գրաքաթոս՝ հինգ մղոն
երկայնութիւն եւ երեք մղոն լայ-
նութիւն ունէր: Իւր հրաբխա-
յին լեռք որ ծովին մակերեւոյ-
թէն 799 մէթր բարձրութիւն
ունէր, խիստ բնաւ գիտակէտ
մ'էր:

Գրաքաթոս կղզին դժուա-
րամատչելի, խաղան եւ անբնակ
էր: Ջրադրութեան համար հոն
գոյացող սպայք երբէք չգտան
անուշ ջուրի հետք: Ոսկայն
հիւսիսային արեւելեան կողմին վը-
րայ տաք ջուրի աղիւր մը գը-
տան, ուր ջերմաչափը 68 ասն-
թիկրատ կը նշանակէր: Գրաքա-
թոսայի եւ ճաւայի մէջ հողա-
յին դիւրն անհաւասար էր, Սու-
ամթրայի կողմէն կը տեսնուէին
ժայռեր եւ բազմաթիւ կղզիներ
որոց ամենէ բարձրը, Փուլո-Պէ-
դի, նշանաւոր էր իր ութ հար-
իւր վաթսուն մէթր բարձրու-
թեամբ սրածայր լեռնով, որ
Գրաքաթոսի հրաբուխէն աւելի
բարձր էր: Զուրբուն խորէն
գուրս ելլող հրաբխային տանն
չորս փոքր կղզիներ գտնուեցան
այն գծին վրայ որ, Լամբունկի
ծովածոցին տաններկու մղոն հե-

ռաւորութիւն ունեցող, Հոկ հըր-
ուանդանը կը միացունէր: Հոս
էր Թէլըր-Պէթոնկ քաղաքը, որ
հրաբուխէն կործանեցաւ: Սէն-
Նիքոլա՝ այսինքն ճաւայի հիւ-
սիսակողման ամենէ մերձ հըր-
ուանդանին վրայ:

Կոտորածին զոհերուն թուոց
վրայ ենթադրութիւններ միայն
կարելի է ընել առ այժմ, սա-
կայն սա ստոյգ է որ, մարդկա-
յին երեւակայութեան բմունա-
ծէն աւելի է Պանթամի նահան-
գին հիւսիսակողմը, որ ամեն
կողմէ աւելի փնտռուեցաւ, քանի
մը տարի առաջ մէկ միլիոնէն
աւելի բնակիչ ունէր, սակայն
հետզհետէ հողին արտադրիչ
զօրութիւնը նուազած ըլլալով
բնակիչները մնացած քաղթած
էին:

Հնդկաստանի կառավարու-
թեան կողմէ մէկը միւրեւցաւ Պա-
թավայէն, լիազօր իշխանութիւն
ունենալով՝ Պանթամի նահանգին
մէջ ողջ մնացողներուն օգնու-
թիւն բաշխելու համար: Հոլան-
տայի ծովային գործոց նախարարն
պատուէր ըրած է ի Պաթավիա,
Սոնտի նեղուցը պատերազմական
նաւեր զրկել եւ անցքը դոցել:
որպէսզի հնդկական ուղիներուն
եկող բազմաթիւ նաւերուն աղ-
ղաբարութիւն մը ըլլայ թէ վը-
տանգաւոր է նաւորդէլ հոն:
Չեւք առնուած կամ առնուե-
լիք միջոցներու հակառակ, եր-
կիւղ կայ, որ ծովային ցաւալի
արկածներ պատահին:

Անգլոյ ծովային գործոց նա-
խարարութիւնը, հրաման տուած
է իր Չինական նաւատորմի ե-
րեք մարտանաւերուն, որ եր-
թան Սոնտի նեղուցը նոր քննու-
թիւն մը ընելու սկսին: Այդ նա-
ւերն են Շանքին, Մէյքը եւ Փա-
յինկ-Ֆիլի: Ամսթերտամ, Լա-Հէյ
եւ Հոլանտայի միւս զինուոր քա-
ղաքացի մէջ յանձնաժողովներ կը
կազմուին, այս զարհուրելի ա-
ղէտքէն ազատելով՝ ողջ մնա-
ցողներուն օգնութիւն հասցու-
նելու համար:

ԱԶԳԱՅԻՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՈՐԾԵՐԸ

Կը վերջացունենք առ այժմ Ե-
գիպտոսի ազգային գործոց նը-
կարագրը, յիշատակելով միայն
քանի մը կարեւոր կէտեր, որք
արժանի են ազգային պաշտօնա-
կան մարմնոց ուղադրութեան՝ որ-
պէսզի եթէ իրօք այդ եղելու-
թիւնք սոսուգութիւն ունին ա-
տոնց դարմանը խորհին. արժա-
նի են նաեւ հասարակաց ուղադ-
րութեան՝ որպէսզի խղճի մտօք
գոտորդութեան առնուին հասա-
րակութեան կողմանէ:

Գանդաւ կը յայտնուի մեղ
Դահլիշի հայոց կողմէ թէ, մինչ-
դեռ նախընթաց տարիներու մէջ,
տեղւոյն ազգայինք, իրենց գէժ
եղած զրկանաց եւ ազօրեւաւո-
րութեանց համար բողոք բառ-
նալ եւ միջամտել առաջարկած
էին այժմու լիազօր պատուիրակ
Վաւմ. Արաբեան փաշայի, եւ
մինչդեռ նորին վստահութիւնն ան-
տարբեր մնացած էր այս մասին,

ՁԱՅՆԸ. — Բարեբաղդարար, ըսէ, Այսին Սարայի բնակիչներն ոչմիայն կ'երգեն այլ նաեւ երգը կ'ստեղծեն :
ԵՍ. — Սակայն ոչ եւրոպական :
ՁԱՅՆԸ. — Ամեն ազգ իր երգն ունի, «չար մարդիկ միայն երգ չունին», ըսաւ Շիլլեր, սակայն ամեն ազգ բնութեամբ չունի, այլ եկու նայէ որ կ'երգեն, և շատ անգամ այս երգերն ունենցորին աչքէն արտաւոր կըրերն :
ԵՍ. — Աղէկ միտքս եկաւ, ինչէր այն որ Պ. Սքիլինգի կ'ըսէ թէ Հոր Հոր աղային աղջիկը լացուցեր է զինքը :
ՁԱՅՆԸ. — Բնական է այդ, մինչդեռ Որբէսի քնարով Կերբերոսը*) կը քնացնէր, օրորդ Սիրանոյ ինչո՞ւ համար իր մեջոյ ձայնով Պ. Սքիլինգին չ'լացնէ : . . .

Կ. Ս. ԱՆԹԱՆԱՍ

ՆԵՐՔԻՆ

Էքսպրէս իր սեպտեմբեր 10 թիւով կըսէ թէ, Ամեն Ս. Պատ. բնաբ. Հայրը, որ անյեւալ շաբաթ օր Վեհափառ Սուլթանին պիտի ներկայանար, տակաւին չէ ներկայացեր, և թէ նորին Բարձրութիւնը միշտ Վեհ. Արաքսի միջոցով տունը կը գտնուի ի Պէտիւքէի :

— Մեծ եպարգոսի կողմէ հըրամանագիր մը շրջուած է ներքին դուրծոց նախարարութեան, որպէսզի Արաքսի թան զործոց պաշտօնատունը մասնաւոր յանձնախումբ մը կազմուի, Ս. Տեղեաց և Խալաթիան ներկայիչ Հանձն Բեաթիլ էֆէնտիի նախագահութեան տակ : Գանձախումբ մը անդամները պիտի ըլլան Արաքսի թան և Արաքսի զործոց նախարարութեանց, Պետական խորհրդոյ, արդ. և գաղթականաց մասնաժողովոյ կողմէն :
Այս յանձնախումբին պաշտօնը պիտի ըլլայ գործադրել Պետական խորհրդոյ օրոշումները, որք կտրամադրեն ուշադրութեան առնուլ Արեւելեան Բուսէլի մահմադական գաղթականաց պահանջները, որովք կուզեն որ նոյն երկրի մէջ իրենց անշարժ ըստացուածները ետ արուին : Գանձախումբ մը քննութեան պիտի առնէ նաեւ ասոնց առնելիքները կարգադրութիւնը, մասնաւորապէս այն գաղթականաց որք բողոքովն աղքատ մնացած ու զօրէր են իրենց երկրին երկաշու կամ փոխանորդներ զրկուած միջոցներէն : Գանձախումբ մը պիտի պարտաւորի հայթայթել այդ կարգադրութիւնը փոխանորդներուն և փաստաբաններուն համար եղած բոլոր ծախքերը : Այդ փոխանորդը կամ փաստաբանը իրենց ձեռքը պիտի ունենան գաղթականաց պահանջներուն վաւերականութիւնն հաստատող թուղթեր, և պիտի զրկուին յիշեալ երկրը կամ պահանջուած այդ ստացուածներն ստանալու՝ և կամ յանկուարի ատոնց տիրացողներու գէտ գատ բանալու համար :

Այս մասին ըլլալիք ծախքերը պիտի գործուին ստանալիք կաշառածներու վաճառմամբ, և կամ կաշառածատիրոջ կողմէ տրուելիք գրամով, եթէ չուզէ որ իր կաշառածը վաճառուի :

— Սուրբոյ պաշտօնական թերթը

*) Գիտնոց չունի :

թեր կը պատմէ թէ, Մէհմէթի Տիւրքիներէն տառերիւ հազի, Բատրի Շէյխերու կողմէ բնական գիւղի մը մէջ երթալով, երկու հողի վերջուցէր են, որք արտը կը հնձեն եղէր, և անգործարար զանոնք չարչարելէ ետեւ ուղանէր են : Տեղւոյն կառավարութիւնը գործն իմանալուն անմիջապէս, ձիւնոր զինուորներ կը շրջէ քննել գատաւորի մը հետ միատեղ :

Տիւրքիները տեսնելով որ զինուորները կը մօտենան, իրենց յեղի բոլոր մարդերն ի միասին ժողովելով, ունեցած գոյքերն շրջափակայ գիւղօրէնները կը տանին պահպանելու համար : Բայց ի զուր փախլիլ ուղեցին, վաճառի զինուորաց խումբը պաշարեց զիրենք, և մարդասպանները բռնեց :

— Մէլնիկի կառավարիչ Ղաւիպ փաշա կը հեռագրէ Պոլս, թէ Բարթան Բահման անուն համբաւար առաքակապետը մեռած է, որու հրոստիւմը եւ նիճէի կողմերը զարնուելով, յաջողած էր փախլիլ և սակայն զինուորաց կողմէ հարածուելով վրայ է :

—

ԵԴԻՊՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Խըտիվը քանի մը օր առաջ մեկնած է, Ստորին-Եգիպտոսի գլխաւոր կղերականները այցելելու համար :

— Տարածայնութիւն կայ թէ, կըսէ հեռագրերը, ծանր անհամաձայնութիւն մը գոյացած է կառավարութեան և Սուլթանի կառավարիչ Հիւս փաշայի մէջ :

— Նոյնպէս տարածայնութիւն կայ, որ Խարթում սպառնալուց երկրակայած է Մէհմէթի կողմէն :

— Զօրապետ Հիւս փաշա Սուլթանին հեռագրած է պատերազմական գործոց նախարարութեան, թէ գիտատրութիւն ունի Մէհմէթի գէտ յառաջանալ սեպտեմբեր 8-ին, որպէսզի ձեռք ձգէ Էլ-Օպէյան ու Պարան՝ որոյ վրայ յարձակած են ապստամբները :

— Լորա Հարթիլիթոն ճառախոսութիւն մը բրած է գումարման մը մէջ, որ տեղի ունեցած է ի Շէֆիլդ : Այս ճառախոսութեամբ երկարօրէն խօսած է եգիպտոսի մէջ անգլիական քաղաքականութեան վրայ, և այս առթիւ յոյս յայտնած է որ, պարագաները կարելիութիւն պիտի յուսնեն եգիպտոսը պարպելու անգլիական զօրքերէն, մինչեւ որ Բարլամէնթը իր առաջիկայ նիստն ընէ, որ տեղի պիտի ունենայ փետրուար ամսոյ մէջ :

—

ՀՐԷԻՑ ԴԷՄ ՀԱԼԱՅԱՆԻ

Հունգարիոյ մէջ Հրէից գէտ եղած հալածանքը չափն անցած է, մասնաւորապէս Սոյթօրի մէջ : Սեպտեմբեր 1-ին, կէս գիշերուան գէտ, չորս հարիւր հոգիներ աւելի զինեալ անձինք քաղաքին փողոցները գառնալով կողակտած և կործանած են ամեն ինչ որ Հրէից կը վերաբերէր : Այս կողոպուտն ու կործանումը երեք ժամ տեւէր է : Կողոպուտից ինչ որ չեն կրցած վեր-

ցունել՝ շնչած կամ փնտած են զայն, և հրազինուք սպառնալով են իրենց մօտենալ ուղղւելուն : Սէն-Բիէրի մէջ Հրէայ վաճառական մը կողոպուտած և սպաննուած է ատոնցմէ գաւազանի հարուածներով, Սպաստոս 29-ին գիշերը : Հեռուեալ օրը Էկէրթէի փոխկառավարիչ հեռագիր մը կըստանայ, որով կը ծանուցուի իրեն թէ շատ տեղեր կրակի արուած են : Բազմաթիւ ձերբակալութիւններ կըլան :



LA PHARMACIE
GAETANO Lti-PERPIGNANI

ԿԱԷԹԱՆՕ Լ. ԲԵՐԲԵՆԻԱՆԻ ԴԵ-
զարանը փոխադրուած է Վիկտոր
Ֆէրմանէն, Ֆրէնք Մահալէի :

Այս դեղարանը, որ 1709-ին հիմնուած է և որ նոյն ատենէ մինչեւ այսօր չէ դադարած գործելէ, ի մեծ գումարանութիւն Իվիլի հասարակութեան, այսուհետեւ ևս պիտի ծառայէ, գիշերներն ալ բաց մնալով և ունենալով Պ. Մարք Բանդիլի ձեռնուղեկներ, որ առաջին կարգի դեղագործ մէ, և որ իր ընկերայն դեղարանը կը մտնէ :

Գեղարանին անունը պիտի ըլլայ, ԴԵՊԱՐԱՆ ԿԱԷԹԱՆՕ Լ. ԲԵՐԲԵՆԻԱՆԻ, յաջորդողը Ն. Կ. ԲԵՐԲԵՆԻԱՆԻ ԵՒ Մ. ԲԱՆԶԻԻԲ : և ընկերութեան անունը պիտի ըլլայ Ն. Կ. ԲԵՐԲԵՆԻԱՆԻ ԵՒ Մ. ԲԱՆԶԻԻԲ :

ԱՌԵՆՏՈՒՐ

ՁԱՄԻԶ-ՍՈՒԼԹԱՆԻՆ. — Հրապարակը հանգարու է. մինչեւ այսօր եւ կամ ապրանքը 74,000 կենդանար. Էքսպրէս ծախուեցաւ 3 էն 3 25
Ա. Տեսակ » 4 30 էն 4 87
Բ. Տեսակ » 3 30 էն 4
Հասարակ » 3 էն 3 25
Թաց » 2 30 էն 2 45
Ուրա. — Փանի մը ծախքեր կրան 130 էն 160 գրւ :

Չէշէ. — Գործ չեղաւ
Փարադուր. — Մախուէյաւ էքսպր. թիւ 6 գրւ :
Ա. Տեսակ ծախուեցաւ 3 75 էն 3 75
Հասարակ » 3 25 էն 3 50
ԲԱՅԱՆԻ. — Մինչեւ այսօր եկաւ 3000 կենդանար.

Էլլէմէ էքսպրէս ծախուեցաւ 3 37
Ա. Տեսակ » 2 75 էն 3
Հասարակ » 2 37 էն 2 50
ՍԵՒ ՁԱՄԻԶ. — Մինչեւ այսօր եկաւ 4000 տոթրակ
Թէրէ. — Մախուէյաւ 88—82
Երէ. — » 80—92
պզտիկ բարձրիկ
Իրէ + քր. — » 2 25 էն 2 75
Թուրք. — Մինչեւ այսօր եկաւ 17258 բեռ.

Էլլէմէ ծախուեցաւ 120 էն 150
Հասարակ » 75 էն 100
ԲԱՄՊԱԿ. — Գործողութիւն չեղաւ :
Ա. ԵՒՆՆ. — 116 կողով ծախուեցաւ 26 հատ Ատէթ գին 101 գրւ :
20 հատ Ձալ գին 112 գրւ :
70 հատ Թալքուտէ գին 96 էն 107
ԲՈՒՐԻ. — Գործ չեղաւ :
ԲԱԼԱՄՈՒՏ. — 400 կենդանար ծախուեցաւ 102 գրւ :

Ճէշի. — Նոր բէթթիւն 600 հո. խաւ կաւ այս չարաթի և հոխան 17 զուրու զճարեցին :

ԽԱՇԵԱՆ. — Հրապարակը խիստ թույլ է հոխան 74 փարպէն աւելի վճարող չեղաւ :
ԳԱՐԻ. — Հրապարակը հանգարուէ և զինք օրտորէ ինչալու վրայ է : 90000 հաղար քիլէ ծախուեցաւ 11 50 էն 15 25 զուրուէր :

ԴՐԱՄԱԿԱՆ

Փոխանակադիր	Կ. Պօլսոյ վրայ	124,75—
»	Լիւնարա երեւ. տնտ. ան	135,50—136
»	» օրտ. ան	137 —137,75
»	» տնտ. ան	215, —216
»	» օրտ. ան	217 —218
»	» տնտ. ան	450—453
»	» օրտ. ան	455—458

	քամիօ	թարիֆա	ողջ
Արծաթ մէհաթիէ	23,15	25,05	20
Ոսկի օսմանեան	125,	135,26	107,99
Սթէրլին	137,	148,25	148,36
Ոսկի գաղղիական	109,50	118,49	94,60
Վեյնոյ	101		
Հինգնոյ	—		
Մէթալիք	63,		
Թղթադրամ	1000		

ՊԱՇՏՕՆԱՏՈՒՆՔ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆՑ

ՀՐԴԵՀԻ

QUEEN
INSURANCE COMPANY

ԹԱՂՈՒՀԻ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԼԻՎԵՐՊՈՒԼԻ ԵՒ ԼՈՆԴՈՆԻ

Դրամադրու 2,000,000 Անգլ. ոսկի

ԾՈՎՈՒ

RELIANCE
MARINE INS. Co. Ltd.

ԾՈՎՈՒՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԼԻՎԵՐՊՈՒԼԻ

Դրամադրու 400,000 Անգլ. ոսկի

Սոյն ընկերութիւնը Փոքր Ասիոյ գլխաւոր քաղաքաց. Բարամանիոյ Սուրբայի, Արշակունի կողմաց, Բուսէլի և Յունաստանի մէջ ճիւղեր հաստատած են :

Կեդրոնական Պաշտօնատուն

Ձեռնկայ թաղ Բախտուրլոյ ֆէրմանէն վերի յարկը թիւ 2 և 3

Ընդհանուր գործակալ
ՃՕՆ Ա. Ա. ԿՈՒ

ԴՐԱՄԱԿԱՆ

Բէշիմալճիար պաշի Սէֆէրեան խան վերի յարկը թիւ 3 մասնաւոր տեղեկութեանց համար պէտք է գիտնել ընկերութեան փոխ գործակալ Յ. Կ. Հիւսնեանի վերոյիշեալ խանին քով նստեանսեալուն մարդան :

THE

COMMERCIAL UNION

ԳՕՄԷՐՍԻԱԼ ԻՆԵՐՈՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ԴԵՄ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 2,500,000 ՍԹԷՐԼԻՆ ՈՍԿԻ

—

Այս Ընկերութիւնը հրդեհի գէտ կ'ապահովէ Իվիլի և շրջակայ գիւղերուն մէջ, շէնքեր, կահկարասիներ, ապրանքներ, կալուածներ, գործարաններ և այլն :

ԳՕՄԷՐՍԻԱԼ ԻՆԵՐՈՆԸ՝ միւս բոլոր ընկերութեանց առած առաւելութիւնները կուտայ իրեն ապահովողներուն :

Վճարելիք տուրքերը, մասնաւոր պայմանագրութիւնով մը, այս քաղաքս գտնուող միւս անգլիական Ընկերութեանց վճարած տուրքերուն հաւասար են :

Վարը ստորագրողները արտօնութիւն ունին այստեղ՝ Ընկերութեան գէտ՝ որեւէ գանգատի գոհութիւն տալու :

ԴՈՐԻԱԿԱԼԻՔ

RALPH et JOHN GOUT

ԲԱԼԻՅ և ՃՕՆ ԿՈՒ